ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2025 թվականի N 582 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N 911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի «Հանրային ծառայության առանձին տեսակներով նախատեսված պաշտոնների, դասային կոչումների և աստիճանների համապատասխանությունը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1796-Ն և N 1797-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) N 1 հավելվածը «Պաշտպանության նախարարության զինվորական ծառայության պաշտոններ» սյունակից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոններ» սյունակով.

«

Պետական պահպանության ծառայության զինվորական ծառայության պաշտոններ
գլխավոր
ավագ
միջին
կրտսեր

».

2) N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Պետական պահպանության ծառայությունում շնորհվող զինվորական կոչումներ» 26-րդ սյունակով.

«

26.
Պետական պահպանության ծառայությունում շնորհվող զինվորական կոչումներ
գեներալ-մայոր
գնդապետ
փոխգնդապետ
մայոր
կապիտան
ավագ լեյտենանտ
լեյտենանտ
ավագ ենթասպա
ենթասպա

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

15.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ